Community-led Urban Strategies in Historic Towns (COMUS)

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

«Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ պատմական քաղաքներում» (COMUS) ծրագիր

Հին Գորիս քարանձավային բնակավայրի վերականգնում

Իրագործելիության ուսումնասիրություն

Բովանդակություն

1. Ամփոփ նկարագրություն 3
1.1 Ծրագրի նպատակը.....3
1.2 Ծրագրի խնդիրը 3
1.3 Հիմնական տեղեկություններ.....3
1.4 Ներկայիս կարգավիճակը.....4
1.5 Ծրագրի առաջարկվող փուլերը 4
1.7 Բյուջետային կարիքների և փուլերի ընդհանուր գնահատում 5
2. Ներածություն 6
2.2 Ֆինանսական գնահատում.....6
2.3 Առկա նյութերը և պայմանները 6
2.4 Առաջարկների նախագծումը (և գծագիրը) 6
2.6 Հղումներ 6
3. Աշխատանքների համառոտ նկարագիրը 8
3.1 Ներդրման/ծրագրի նկարագրությունը.....8
3.2 Ծրագրի իրականացման մոդել և համաձայնագրեր.....8
3.3 Շրջանակային պայմանների ցանկ 8
3.4 Արդյունքներ և օգուտներ.....8
3.5 Իրավական դաշտը 9
3.6 Սոցիալական և տնտեսական իրագործելիությունը.....9
3.7 Իրականացման ռազմավարությունը և կայունությունը 9
3.8 Կայունություն 10
4. Ռիսկի գնահատում 11
5. Առաջարկություններ.....14
6. Գործողություններ և պատասխանատու անձինք/կազմակերպություններ.....15
7. Տեղեկագիրը կազմեց 15

1. Ամփոփ նկարագրություն

1.1 Ծրագրի նպատակը

Առաջարկվող ծրագրի նպատակն է ապահովել Գորիսի արգելավայրի (Հին Գորիս) պահպանումն ու շահագործումը՝ արգելավայրի տարածքի՝ ներառյալ հին քարանձավների և հարակից ենթակառուցվածքի վերականգնման և այն Հայաստանի ամենատարածված զբոսաշրջային վայրերից մեկը դարձնելու միջոցով:

1.2 Ծրագրի խնդիրը

Ծրագրի հատուկ խնդիրն է խթանել Գորիս քաղաքի կեցության մակարդակը՝ տեղի բնակչության համար նոր աշխատատեղեր և ձեռնարկատիրական հնարավորություններ ստեղծելու միջոցով:

1.3 Հիմնական տեղեկություններ

Գորիս քաղաքը տեղակայված է Հայաստանի պատմական վայր Զանգեզուրում, որը ներառում է ներկայիս Սյունիքի շրջանը և Վայոց Ձորի մի մասը: Այն գտնվում է Երևանից 250 կմ հեռավորության վրա՝ Հայաստանի հարավ-արևելքում: Առաջին բնակավայրը 13-րդ դարից ի վեր տեղակայվել է կիրճի անհարթ լայնվածքի վրա՝ ժայռապատ և փոսաշատ գոտում, որտեղ բարձրանում են կոնաձև ապառաժներ: Այն գրավել է 5.5-6 հեկտար տարածք: Բնակավայրը մոտիկ է եղել առևտրային ճանապարհին (որը կապում է Հայաստանի հյուսիսային հատվածները հարավին և հարավ-արևելքին) և ունեցել է բավականին հիանալի նախագծված տարածական կառուցվածք: Այստեղ կառուցված են եղել Զանգեզուրի շրջանին յուրահատուկ բնակելի տներ, որոնք ժամանակի ընթացքում աստիճանաբար լքվել են: 19-րդ դարի սկզբին այստեղ կար 119 տնային տնտեսություն: Կոնաձև ապառաժների մեջ կիրճի լանջերին պեղվել են որպես բնակարան ծառայող տիպային քարանձավային բնակավայրեր, որոնք կոչվում էին քրատակեր: Քրատակերը հիմնականում բաղկացած էին մեկ մեծ սենյակից, չնայած երբեմն ունենում էին խոռոչ սենյակներ: Կային նաև քարանձավներ, որոնք պաշտպանական նշանակություն ունեին և հնարավոր էր բարձրանալ քարանձավը միայն պարանների օգնությամբ: Կային նաև մի քանի բազմահարկ քարանձավ-տներ, որոնք միացված էին ներքին միջանցքով: Վերին հարկերը սովորաբար ունեին փայտից պատրաստված պատշգամբներ, որոնք կախված էին ժայռի վրա: Ժամանակի ընթացքում քարանձավները լայնացվել և ավելի հարմարավետ են դարձվել: Դրանց դիմաց կառուցվել են կամարաձև, կորացած ճակատամուտքեր, որոնք ունեին տարբեր հարմարություններ, օրինակ՝ թոնիր, վառարան, պահարաններ և այլն: 19-րդ դարից ի վեր Գորիսում սկսեցին կառուցել քարե տներ, և Քրատակերը սկսեցին ծառայել որպես լրացուցիչ կացարան:

Տները հիմնականում երկհարկանի էին: Ստորին հարկը ծառայում էր որպես խոհանոց, մառան, մթերանոց և այլ տնտեսական նպատակներով, իսկ վերին հարկը, որտեղ բնակվում էին մարդիկ, բաղկացած էր շքամուտքից և կա՛մ մեկ մեծ, կա՛մ երկու փոքր սենյակներից: Տներին բնորոշ էին կամարաձև շքամուտքը և գեղեցիկ փայտե պատշգամբները: Դրանք կառուցված են եղել առաջնակարգ բազալտից, և տանիքը կապված է եղել փայտե սալիկներից:

Գյուլեի և Միջին շրջանների բլուրների վրա երևում էր Սուրբ Հռիփսիմեի եկեղեցին և մատուռը: Ենթադրվում է, որ Սուրբ Հռիփսիմեն կառուցվել է 4^{րդ} դարում՝ փոխարինելով հեթանոսական մի տաճարի: Այն վերակառուցվել է 16^{րդ} դարում:

Խորհրդային ժամանակաշրջանում եկեղեցին վերածվել է ակումբի: Բայց 2009-2013 թվականներին եկեղեցին վերականգնվել և ներկայումս գործում է:

Մելիքների մատուռը (17-րդ դար) Գորիսի միջին-արևելյան հատվածում տեղակայված գերեզմանոցի հյուսիսային հատվածում է գտնվում: Այն իրենից ներկայացնում է կամարակապ

բազիլիկա՝ կառուցված մանրացված բազալտ քարից: Մատուռը ծառայել է որպես դամբարան Հին Գորիսի արքայորդիների համար:

Գորիսում կային բազմաթիվ ջրաղացներ, որոնք բաժանվում էին երկու դասի: Ջրաղացների մի մեծ խումբ տեղակայված էր Վարարակն գետի աջ ափին՝ Հին Գորիսի Զոփչուն և Լաստի թաղերի դիմաց: Երկրորդ խումբը բաղկացած էր չորս ջրաղացից և գտնվում էր Միրաք կամուրջից ներկայիս Կոմիտաս փողոց տանող ճանապարհին: Դրանք օգտագործում էին ստորգետնյա ջրեր: Ներկայումս պահպանվել է միայն մեկ ջրաղաց: Այն ունի 4x5 մ ուղղանկյուն կառուցվածք և երկթեք տանիք: Գորիսում կային նաև բազմաթիվ խեցեգործարաններ, բայց այժմ պահպանվել է միայն մեկը՝ Ղաթրնի կիրճում:

1.4 Ներկայիս կարգավիճակը

Ներկայումս պատմաճարտարապետական հուշարձաններով և ավանդույթներով հարուստ հին Գորիսի պահպանումը և շահագործումն առաջնահերթություն է: Հին Գորիսի տարածքը բնակեցված է եղել 20-րդ դարի սկզբից ի վեր: Այն մոտիկ է եղել առևտրային ճանապարհին և ունեցել է բավականին հետաքրքիր նախագծված տարածական կառուցվածք: Այստեղ կառուցված են եղել Զանգեզուրի շրջանին յուրահատուկ բնակելի տներ, որոնք ժամանակի ընթացքում լքվել են:

Հին Գորիսը ազգային կարևորության պատմամշակութային հուշարձան է: Այն իրենից ներկայացնում է բնական և ճարտարապետական հուշարձան: Մշակույթի նախարարությունը հաստատել է պաշտպանության գոտու հատակագիծը, որը գործնականում ներառում է Գորիս քաղաքի ամբողջ հիմնական կենտրոնական հատվածը: Ի լրումն, Սյունիքի պատմական և մշակութային հուշարձանների պաշտոնական ցանկում ներառվում է Սուրբ Հռիփսիմե եկեղեցին, Մելիքի եկեղեցին, 52 բնակավայրային քարանձավները, ամֆիթատրոնը, քարվանսարան, բնակելի ժայռապատ բլուրը, Ձագեձորի բերդը, Վարարակն գետի վրա անցնող կամրջի վրա նավթամղիչ կայանը, հին գերեզմանատունը և բազմաթիվ տապանաքարեր և խաչքարեր:

1.5 Ծրագրի առաջարկվող փուլերը

Հին Գորիսի վերականգնումը և վերաշահագործումը երկարաժամկետ ծրագիր է: Այն պետք է իրականացվի փուլերով: Առաջարկվում են հետևյալ փուլերը՝

- Ենթակառուցվածքների՝ ներառյալ, ավտոկայանատեղի և երթևեկելի մասի նախագծում
- Ճանապարհաշինարարություն
- Քարանձավային բնակատեղիների վերականգնում
- 19-րդ դարի հին տների վերականգնում
- Յուրաքանչյուր փուլում 5-10 քարանձավներ և/կամ տներ կարելի է վերականգնել:
- Եթե սա կատարվի ընդհանուր նախագծի և ծրագրի շրջանակում, ապա տարածքը ժամանակի ընթացքում կվերածվի հիասքանչ զբոսաշրջային և մշակութային կենտրոնի Զանգեզուրում:

1.6 Մեթոդաբանություն

Ամենակարևոր խնդիրներից մեկը կլինի երկրորդային ճանապարհների ճիշտ վերականգնումը տեղական գլաքարով՝ ինչպես նախկինում էր: Նախքան քարանձավ-բնակավայրերի վերականգնումը՝ պետք է իրականացնել հնէաբանական պեղումներ: Հին Գորիսում դեռևս կարող են պահպանված լինել շատ անակնկալներ:

Նախքան որևէ քարանձավ կամ բնակելի տուն վերականգնելը, բոլոր աշխատանքները պետք է հաստատվեն նախագծով, ինչպես նաև պետք է առկա լինի սեփականության կարգավիճակ և շահագործման պայմանագրեր: Յուրաքանչյուր փուլում 5-10 քարանձավներ և/կամ տներ կվերականգնվեն:

Հին հետիոտնային կամուրջների վերականգնումը և նորերի կառուցումը Վարարակն գետի

վրա պարտադիր է: Այն կվերականգնի Գորիս քաղաքի և հին Գորիսի արգելավայրի միջև կապը: Մենք առաջարկում ենք անփոփոխ թողնել Վարարակն գետի աջ ափը և հիմնական շինարարական աշխատանքներ չտանել այնտեղ: Նախընտրելի է պարզապես ընտրել մի քանի տեղանքներ՝ տեսարժան վայրերը դիտելու համար, և բարեկարգել ենթակառուցվածքը: Այս տարածքը ներառված է ՀՀ մշակույթի նախարարության կողմից հաստատված պաշտպանության գոտում, և բոլոր միջամտությունները պետք է կատարվեն պատմական և մշակութային միջավայրի խիստ պահպանմամբ:

Պահպանված մշակութային շինությունները պետք է վերականգնվեն, բնակելի տները պետք է վերանորոգվեն՝ արդի պահանջներին համապատասխան և դրանց նոր գործառույթը ապահովելու համար:

Պետք է ընդգծել մշակույթի և արհեստների դերը: Գորիսի քարանձավային ձևամշակված հին թատրոնը պահպանվել է: Այն պետք է վերակառուցվի, և ներկայացումներ ու այլ միջոցառումներ կարող են կազմակերպվել այնտեղ:

1.7 Բյուջետային կարիքների և փուլերի ընդհանուր գնահատում

No	Անվանումը	Միավոր	Միավորի քանակ	Միավորի գին	Ընդհանուր արժեք	Ընդհանուր արժեք (1€=530Դ)
1	Քարանձավների վերականգնում (առանց ներսի մասի)	քար-անձավ	52	10,000,000 Դ	520,000,000 Դ	981,132 €
2	Քայքայված շինությունների վերականգնում	շենք	50	50,000,000 Դ	2,500,000,000 Դ	4,716,981 €
3	Ճանապարհների վերականգնում	$մ^2$	3,000	40,000 Դ	120,000,000 Դ	226,415 €
4	Նախագծային եւ հետազոտական աշխատանքներ		1	100,000,000 Դ	100,000,000 Դ	188,679 €
5	Այլ ծախսեր (օրինակ՝ապօրինի շենքերի քանդում)		1	100,000,000 Դ	100,000,000 Դ	188,679 €
	Ընդհանուր				**3,340,000,000 Դ**	**6,301,887 €**

2. Ներածություն

2.1. Տեխնիկական գնահատում

Տեխնիկապես մենք որևէ էական դժվարություն չենք տեսնում ծրագրի իրականացման հարցում: Միակ խնդիրը կարող է հանդիսանալ այն, որ նոր բնակելի տներ են կառուցվել տարածքում, որոնք շարունակում են ընդլայնել իրենց տարածքը: Չնայած այս տարածքը պաշտպանական գոտու մաս է կազմում, և տարածքի մեծ մասի սեփականատեր է հանդիսանում քաղաքապետարանը, այնուամենայնիվ որոշ տներ և բակեր մասնավոր սեփականություն են: Ուստի, ծրագրի հաստատման դեպքում անհատական շինարարությունը պետք է լիովին արգելվի տարածքում, և միջավայրին անհապատասխան բոլոր ավելացված շինությունները պետք է քանդվեն: Բայց սա պետք է կատարվի հնարավորինս քիչ վնաս տալով տեղացիներին: Կամ նրանց պետք է տրվի փոխհատուցում իրենց սեփականություն հանդիսացող տարածքների համար, կամ նույնիսկ նրանց պետք է թույլատրվի առաջարկներ ներկայացնել վերականգնման աշխատանքների համար: Օրինակ՝ նրանք կարող են առաջարկել տունը վերակառուցել որպես խեցեգործարան, գորգագործության կամ փայտամշակման արհեստանոց և այլն: Ուստի, կստեղծվեն նոր աշխատատեղեր տեղի բնակիչների համար, և տեղի մշակույթը կցուցադրվի: Սա կլրացնի քարանձավային քաղաքի գաղափարը:

2.2 Ֆինանսական գնահատում

Նախահաշվարկով ծրագրի ամբողջ իրականացման համար կպահանջվի 3,340,000,000 ՀՀ դրամ (6,301,887 եվրո): Միանգամայն իրատեսական է ստանալ նման ֆինանսավորում, եթե կառավարությունը, ոլորտում աշխատող ՀԿ-ները և հիմնադրամները հաստատեն ծրագիրը և այն համարեն բարձր առաջնահերթության խնդիր: Բացի դա, աշխատանքները կարող են կատարվել փուլ առ փուլ:

2.3 Առկա նյութերը և պայմանները

Վերականգնման հիմնական աշխատանքներում նախատեսված է օգտագործել տեղական քարեր և նյութեր: Բարեբախտաբար, թե՛ շրջանում և թե՛ հանրապետությունում առկա են շատ փորձառու արհեստավորներ, որոնք ունեն պահանջվող հմտություններ և գիտելիք: Բայց, ամենայն հավանականությամբ, նրանք որոշակի լրացուցիչ վերապատրաստման կարիք կունենան: Պահանջվող բոլոր նյութերը կան Հայաստանում, և խնդիր չի առաջանա դրանք ձեռք բերելու հարցում:

2.4 Առաջարկների նախագծումը (և գծագիրը)

Նախագիծը և գծագրերը կարելի է մշակել հետագայում:

2.5 Պատասխանատու մարմինները

Հին Գորիսն ազգային հուշարձան է: Հուշարձան թիվ (պետական ցուցիչ) 8.3.2: Պատասխանատու մարմիններն են՝ Մշակույթի նախարարություն, Սյունիքի մարզպետարան և Գորիսի քաղաքապետարան: Բայց արգելավայրի տարածքում կան նաև սեփականաշնորհված բնակելի տներ: Մենք առաջարկում ենք, որ ստեղծվի հատուկ իրավաբանական անձ, որը պատասխանատու կլինի տարածքի վերականգնման և հետագա շահագործման համար:

2.6 Հղումներ

2016 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Գորիս քաղաքում իրականացվել են գործնական հետազոտական աշխատանքներ: Ծրագիրը կազմելու և ներկայացնելու համար կիրառվել են հետևյալ նյութերը և հոդվածները:

- Գորիսի պատմամշակութային հիմնավորման նախագիծ, Մշակույթի նախարարություն, Մշակութային ժառանգության հետազոտական կենտրոն, Երևան, 2011 թվական
- Հախվերդյան Ս., Գորիսի պատմությունը, Երևան, 2005 թվական
- Օրբելյան Ս., Սյունիքի պատմությունը, Երևան, 1986 թվական
- Աբրահամ Կրետացի, Պատմություն, Երևան, 1973 թվական
- Պապուխյան Ն., Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, 1972 թվական
- Լիսիցյան Ստ., Զանգեզուրի հայերը, Երևան, 1969 թվական

3. Աշխատանքների համառոտ նկարագիրը

3.1 Ներդրման/ծրագրի նկարագրությունը

Ծրագիրը նպատակ ունի վերականգնել և վերակենդանացնել Հին Գորիսի արգելավայրը: Այս տարածքը ներառված է պաշտպանության գոտում, և բոլոր միջամտությունները պետք է կատարվեն արդեն ձևավորված արհեստական լանդշաֆտի, պատմական և մշակութային միջավայրի պահպանման նպատակով: Հին Գորիսի հուշարձանները, որոնք արժեքավոր են պատմական և իմացաբանական տեսանկյունից, ինչպես նաև բնական և արհեստական տները այսօր լիովին լքվել են և չեն օգտագործվում: Տարածքի ընդհանուր տարածքային կառուցվածքը անդառնալիորեն կորած է համարվում: Տարածքի յուրահատուկ համայնապատկերը մասամբ ծածկված է (անօրինական շինություններ, ցանկապատեր և այլն), և հնարավոր չէ գնահատել դրա ամբողջական պատկերը: Այդ իսկ պատճառով, Հին Գորիսի տարածքի վերականգնումը և վերաշահագործումը ժամանակակից կյանքի պահանջներին համապատասխան հրամայական է: Առաջարկվող նախագիծը հենվում է հին քաղաքաշինական նախագծման կառուցվածքի վրա, որի նպատակն է մասամբ վերականգնել այն և դարձնել զբոսաշրջային կենտրոն: Նախատեսված աշխատանքները ոչ միայն կապահովեն հուշարձանի պահպանումը, այլև կստեղծեն նոր աշխատատեղեր և կխթանեն զբոսաշրջության զարգացումը, և համապատասխանաբար՝ քաղաքացիական կյանքի ակտիվացումը:

3.2 Ծրագրի իրականացման մոդել և համաձայնագրեր

Մենք ողջամիտ ենք համարում ստեղծել իրավաբանական անձ (հիմնադրամ կամ ՀԿ և այլն), որը պատասխանատվություն կստանձնի ծրագրի լիակատար իրականացման համար՝ սկսած նախագծից, մինչև վերականգնման աշխատանքները և տեղանքի հետագա շահագործումն ու պահպանումը: Դա կլուծի աշխատանքների բարդության խնդիրը, ինչպես նաև կապահովի կայունություն տեղանքի համար: Իրավաբանական անձը շրջանակային պայմանագրեր կկնքի բոլոր պատասխանատու հաստատությունների հետ (մշակույթի նախարարություն, Գորիսի քաղաքապետարան և այլն), ինչպես նաև այն անձանց հետ, որոնք որոշակի տարածքի կամ շինության սեփականատեր են հանդիսանում նշված գոտում:

3.3 Շրջանակային պայմանների ցանկ

Հին Գորիսը ազգային կարևորություն ներկայացնող հուշարձան է: Պատմական և մշակութային պաշտպանված գոտում հողի օգտագործումը կարող է թույլատրվել Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Պաշտպանված գոտիներում թույլատրվում է կատարել միայն պեղումների, վերականգնման և վերակառուցման աշխատանքներ: Սյունիքի շրջանի պատմամշակութային հուշարձանների ցանկում ներառվում են՝ Սուրբ Հռիփսիմե եկեղեցին, Մելիքների եկեղեցին, 52 բնակավայրային քարանձավները, քարանձավ-ամֆիթատրոնը, քարվանսարան, բնակելի ապառաժային համալիրը, Վարարակն գետի կամուրջը, Ձագեձորի բերդը, 9 բնակելի տներ, գերեզմանոցը, տապանաքարեր և խաչքարեր: Պատմամշակութային հուշարձանների պաշտպանության մասին հաստատված պայմանագրով հնարավոր է նաև նոր շինություններ կառուցել տարածքում: Բայց բոլոր ծրագրերը և նախագծերը պետք է հաստատվեն իրավասու մարմինների կողմից:

3.4 Արդյունքներ և օգուտներ

Հին Գորիսի վերականգնման օգուտները կլինեն թե՛ սոցիալական և թե՛ մշակութային: Անհատ ներդրողները նույնպես կարող են օգուտ քաղել ծրագրից: Զբոսաշրջային կենտրոնի ստեղծումը կխթանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը: Տարածքի վերականգնման արդյունքում կզարգանա զբոսաշրջությունը, կակտիվանա քաղաքային կյանքը

և կստեղծվեն նոր աշխատատեղեր տեղի բնակիչների համար: Ի լրումն, ինչն առավել կարևոր է, կստեղծվի միջավայր, որը կապահովի հուշարձանների պահպանում: Նման փորձառություն կա Դիլիջան քաղաքում, որտեղ վերականգնվել և վերաշահագործվել է Ծարամբերյան փողոցը:

3.5 Իրավական դաշտը

Իրավական դաշտը նպաստում է նման ծրագրերի իրականացմանը: Միայն անհրաժեշտ է շատ զգույշ լինել շրջանակային պայմանագրեր կնքելիս, որպեսզի բոլոր պատասխանատու կողմերը հասկանան իրենց դերերը և պարտականությունները:
Գորիսում քաղաքաշինության գործընթացն իրականացվում է ՀՀ Կառավարության 2012 թվականի մայիսի 31-ի թիվ 21 արձանագրության համաձայն: Բոլոր շինարարական աշխատանքները խստորեն վերահսկվում են Գորիսի քաղաքապետարանի կողմից:

3.6Սոցիալական և տնտեսական իրագործելիությունը

Ներկայումս Հին Գորիսը լքված վայր է և աստիճանաբար քայքայվում ու կործանվում է: Քարանձավները, ի տարբերություն 19-րդ դարի տների, ավելի լավ վիճակում են: Վերջիններս ավերվում են կլիմայական պայմանների և բնակչության կողմից վատ վերաբերմունքի պատճառով: Հին գերեզմանոցում նույնիսկ այսօր հուղարկավորություններ են կատարվում: Հին գերեզմանոցում հուղարկավորությունը պետք է արգելվի, և բոլոր նոր տեղադրված ցանկապատերը պետք է հեռացվեն՝ պատմական միջավայրի տեսքը վերականգնելու նպատակով: Եթե համապատասխան միջոցներ չձեռնարկվեն, շատ հավանական է, որ շուտով մենք կկորցնենք հուշարձանը և այն վերականգնելու հնարավորությունները: Բայց մենք հավատացած ենք, որ տարածքի վերականգնումից հետո, այն թե՛ սոցիալական և թե՛ տնտեսական առումով շահութաբեր կլինի: Այս տեղանքը հեռու չէ Ստեփանակերտ, ինչպես նաև Կապան, Մեղրի և Իրան տանող ճանապարհից:

Ոչ պաշտոնական տվյալներով, տարեկան կտրվածքով Գորիս են այցելում մոտ 35-40 հազար զբոսաշրջիկ՝ հայեր և արտասահմանցիներ:
Առաջատար են Ֆրանսիայից զբոսաշրջիկները, որին հետևում են Լեհաստանը, Բելգիան, Ռուսաստանը, ասիական երկրները և այլն:

Պաշտոնական տվյալներ հասանելի են միայն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունից, որը արձանագրում է ընդամենը 10 փոքր հյուրանոց Գորիսում և մոտ 12 հազար զբոսաշրջիկ: Բայց այս տվյալները ակնհայտորեն հեռու են իրականությունից:

Մենք հավատացած ենք, որ նոր ստեղծված զբոսաշրջային կենտրոնը կարող է դառնալ ճանապարհորդների սիրելի կայանատեղը: Վերականգնված քարանձավ-բնակավայրերը հնարավորություն կստեղծեն հիմնել ավելի քան 50 փոքր բիզնեսներ (կացարան և նախաճաշ տրամադրող հյուրատներ, ռեստորաններ, հուշանվերների խանութներ, արհեստանոց-խանութներ և այլն): Ուստի, կստեղծվեն նոր աշխատատեղեր տեղի բնակիչների համար, և տեղի մշակույթը կցուցադրվի:

3.7 Իրականացման ռազմավարությունը և կայունությունը

Ստորև ներկայացվում է գործողությունների առաջարկվող պլանը.

- Վերականգնել Հին Գորիս տանող ճանապարհը և վերականգնել ճարտարագիտական ենթակառուցվածքը:
- Տարածքի մուտքի մոտ պետք է տեղադրվի տեղեկատվական քարտեզ-վահանակ, որտեղ կներառվեն տեղեկություններ բոլոր հանրային հաստատությունների, հուշարձանների, տեսարժան վայրերի, ինչպես նաև դրանց հասնելու ուղիների և դրանց մշակութային արժեքների մասին:
- Ընտրել պոտենցիալ զբոսաշրջիկների թիրախային խմբեր: Դիտարկել դրանց վստահելիության և ցուցաբերվող հետաքրքրության հարցը: Զբոսաշրջային հատվածում առաջարկվում են երեք տիպի կացարաններ.

- Կացարան - «Քրատակ» (էթնոտուրիզմ), որը նախատեսված է այն անձանց համար, որոնք հետաքրքրված են Հին Գորիսի սովորույթներով և ավանդույթներով: Այս «Քրատակերը» կվերականգնվեն և կհամալրվեն ավանդական կահույքով և սարքավորումներով: Կացարաններում կլինեն ընդհանուր ննջասենյակներ, սանհանգույց, խոհանոցներ: Խոհանոցները կարող են տեղակայվել «Քրատակերից» դուրս՝ վերականգնված ավանդական տուն «Ղարադամներում»:
- Կացարան - ավանդական տուն (էթնոտուրիզմ, էկոտուրիզմ): Այս կացարանները կտեղակայվեն ավանդական տուն «Ղարադամներում», որոնք կառուցվել են 18-րդ և 19-րդ դարերում: Հին Գորիսի ավանդական տները կվերականգնվեն և վերաձևափոխվեն ժամանակակից հարմարություններով և կառաջարկվեն զբոսաշրջիկներին:
- Ժամանակակից և հարմարավետ կացարաններ. կարելի է թե՛ վերականգնել և վերանորոգել 19-րդ և 20-րդ դարի Գորիս քաղաքի շինությունները, և թե՛ կառուցել նոր շենքեր Գորիսի հիմնական ճարտարապետական ավանդույթներին և սկզբունքներին համապատասխան (մասշտաբ, ոճական առանձնահատկություններ և այլն):
- Քարվանսարայի նախկին տեղը՝ բնակավայրին եզրին, կարելի է կառուցել զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն: Ցանկալի կլինի վերականգնել և պահպանել «Քրատակերի» և «Ղարադամների» շրջանների որոշ պարագաներ և դրանք տեղակայել ազգագրական թանգարաններում: Որոշ պարագաներ կարող են տրամադրվել արհեստավորներին:
- Հին Գորիսի որոշ տարածքներ կարող են հարմարեցվել որպես անհատ զբոսաշրջիկների համար ճամբարներ, ինչպես նաև տեղական և միջազգային բացօթյա միջոցառումներ կազմակերպելու վայրեր («Բազե» համահայկական երիտասարդական ճամբար, սկաուտական ճամբարներ և այլն):

3.8 Կայունություն

Վերականգնված տների և քարանձավների ապագա տերերը լիիրավ պատասխանատվություն կստանձնեն վարձակալված կամ գնված տարածքների շահագործման և պահպանման համար, և, մեր կարծիքով, կարելի է սահմանել որոշակի զբոսաշրջային հարկ և այդ ռեսուրսները կարող են օգտագործվել ամբողջ տարածքի շահագործման համար: Սա կապահովի ծրագրի կայունությունը:

4. Ռիսկի գնահատում

4.1 Հին Գորիսը ընդգրկված է հուշարձանների ցանկում, և բոլոր միջամտությունները պետք է իրականացվեն իրավասու կազմակերպությունների վերահսկողության ներքո:

4.2 Պետք է մշակվի ընդհանուր բարեկարգման նախագիծ, և բոլորը հետևողաբար պետք է հետևեն այդ նախագծին: Միայն այս դեպքում մենք կարող ենք խուսափել հնարավոր սխալներից: Հակառակ դեպքում, նույնիսկ եթե մենք պահպանենք որոշ հուշարձաններ, մենք կկորցնենք միջավայրի տեսքը և համայնապատկերը:

4.3 Մեկ այլ խնդիր կարող է առաջանալ կապված վերջին տարիներին տեղի բնակչության կենսամակարդակի և մտածելակերպի փոփոխության հետ: Խորհրդային շրջանում Գորիսը ժամանակակից արդյունաբերական կենտրոն էր, բայց ներկայումս գրեթե բոլոր ձեռնարկությունները չեն գործում:

Ներկայումս, պաշտոնական տվյալների համաձայն, գործազրկության մակարդակը Գորիսի քաղաքային շրջաններում 16.5 տոկոս է, և գրանցված գործազուրկների թիվը 1660 է: Բայց, ամենայն հավականությամբ, գործազուրկների իրական թիվը մեծապես գերազանցում է պաշտոնական տվյալները:

Ներկայումս, նրանք հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ: Ուստի, վերականգնողական աշխատանքները պետք է կազմակերպվեն այնպես, որպեսզի ապահովվի բնակիչների մասնակցությունը, ինչպես նաև նրանց համար օգտակարությունը:



Նկ.1. Հին Գորիսի պաշտպանվող գոտի (հաստատված ՀՀ մշակույթի նախարարության կողմից, 2012թ.)



Նկ.2. Հին Գորիսի համայնապատկերը (19-րդ դար)

Նկ. 3. Սուրբ Հռիփսիմե եկեղեցի

Նկ. 4. Գորիս, Քարանձավային քաղաք, ամֆիթատրոն

5. Առաջարկություններ

5.1 Որոշ վերականգնողական աշխատանքներ, մասնավորապես, ենթակառուցվածներին վերաբերող աշխատանքները, կարող են իրականացվել պետական ֆինանսավորմամբ: Հնարավոր է նաև ընդգրկել որոշ հասարակակական կազմակերպությունների և անհատների: Որոշ կազմակերպություններ, մասնավորապես «Երկիր և մշակույթ» կազմակերպությունը, արդեն տանում են հուշարձանների պահպանման և վերականգնման որոշ աշխատանքներ: Նրանք կարող են դառնալ պոտենցիալ գործընկերներ: Ավելի քան 20 տարվա ընթացքում Գորիսը և Ֆրանսիայի Վիենն քաղաքը քույր քաղաքներ են: Հնարավոր է ներգրավել Վիեննի քաղաքապետարանին այս աշխատանքներում:

6. Գործողություններ և պատասխանատու անձինք/կազմակերպություններ

No	Գործողության նկարագրություն	Պատասխանատու մարմին	Տևողություն
1	Ծրագրի կառավարման թիմի ձևավորում	Տեղական ինքնակառավարման մարմին, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն	ամիս 1 > ամիս 2
2	Նախագծման աշխատանքների իրականացում	Իրավաբանական անձ	ամիս 2 > ամիս 4
3	Վերականգնման աշխատանքների իրականացում	Իրավաբանական անձ	6-րդ ամսից հետո
4	Համապատասխան կազմակերպությունների հետ շրջանակային պայմանագրերի կնքում	Իրավաբանական անձ	Շինարարական փուլի ընթացքում
5	Տեղանքի շահագործում և պահպանում	Իրավաբանական անձ	Վերականգնման ավարտից հետո

7. Տեղեկագիրը կազմեց

Փորձագետ՝ Նանար Քալանթարյան (էլեկտրոնային հասցե՝nanar.kalantarian@gmail.com)